



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern consisting of repeating, wavy, horizontal bands of blue, yellow, and white. The spine of the book, visible on the left, is made of a dark, possibly black or dark brown, material. At the bottom left corner of the cover, there is a small, rectangular, yellow paper label with a thin black border. The label contains two lines of handwritten text in black ink. The first line reads "Lbn." and the second line reads "1458".

Lbn.
1458

999

1999

43817-Ա.Է.

3ախյ

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳԻՐ Պ. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՆՆՈՒ ՀԱՅՏԵՒՆ



«QUOS VULT PEDERE JUPITER, DEMENTAT PRIMUM...»

«ՈՒՄ ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԿՈՐՑՆԵԼ Է ՈՒՋՈՒՄ՝ ԱՌԱՋ ԽԵԼՔԸ
ԳԼԽԻՑ ՀԱՆՈՒՄ Է:»

«Մշակի» 201-րդ համարի «ներքին լուրերում» կարգում եմ, որ պ. Գրիգոր Արծրունին խնդրում է (կարդացե՛ք հրամայում է) իր աշխատակից (ծառայ) մի ինչ որ Տէր Գրիգորեանին «ՕՃՅՈՐԵ» լրագրում տպուած պ. Ամերիկեանի նամակին պատասխանել...

Ուրեմն այդ պատասխան պ. Ամերիկեանին, ինչպէս և բոլոր ողորմելի, տղայական յօդուածները, պ. Արծրունու հրամանով է գրում Տէր Գրիգորեան անունով ստորագրողը: Ուրեմն պ. Արծրունին մի ինչ որ Տէր Գրիգորեանի ձեռքումն է գտնվում: Այդ բանի դէմ ես ոչինչ չունեմ ասելու և ինձ էլ ստորագրած կը համարեմ: Եթէ այդպիսի անձինքների հետ պօլէմիկ մտնեմ:

Այդ պատասխանը պ. Ամերիկեանի ամիս 12-ին ներկայացման մասին լինելով՝ ես հետաքրքրուեցայ կարդալու: Ամենակերտոտ թշուառ հայոյանքները *) պ. Ամերիկեանի մասին ցաւով աչքի անցնելուց յետոյ և համոզուելով որ համանման անտոճթ խօսքերը անձնական ստոր, կեղտոտ հաշիւներից ու անտանձ կրքերից կարող են սպիտակի վրայ անցնել՝ յանկարծ, անակնկալ կերպով, առանց այլևայլութեան կար-

*) Այդպիսի հակազրականական աշանտաժներին հայ հասարակութեան անտարբերութիւնն ու «ապատիական» դրութիւնը միայն կարող է համարելու որ պատիժ Յոյներ...

136

39 1461 + 1458-60x 9
28237-62



գում եմ հետեւեալ տողերը իմ դէմ, որոնք, ինչպէս ասում եմ, գրվում են պ. Ամերիկեանի ճանաչմանի պատասխանի մէջ, որ շարքաբաժ է Գրիգոր Արծրունու հրամանով: Ահա այդ տողերը



«Արծրունու օրինակի համար պ. Յարոյին: Այս վերջինը գուրբ է կել Ներսիսեան զպրոցի երկրորդ դասատանից (ստիպուած եմ ասել, որովհետեւ «ՕՅՅՕՐԵ»-ի խմբագիրը մարդկանց հարտու է դասատուններով), յետոյ քննեց է Փարիզ, որտեղ է երևում մի բան սովորած լինի, վերադարձել է, ուրիշներին անկիրթ է անուանում, իրան զիտնական ձեւացնում և Նիլէրի ոգու մասին դատողութիւն տալիս: Փակագծի մէջ նկատենք, որ 1874-ին Յարոյի ուղարկած նամակները Փարիզից «Մշակի» մէջ տպելու ես էի ուղղում և ահագին կտորներ նրանցից դուրս գցում:»

Իմ պատուից ստոր համարելով բանակախ մտնել և հերքել Գրիգոր Արծրունու արբանեակի, ծառայի այս զրպարտանքը, բանբասանքը, վերջապէս ճինսնուացիանս պէտք է միայն ասեմ, որ 1877 թ. վերջերին, չգիտեմ երևանից թէ Ագուլիսից, (ասում են որ Ադուլեցիք լաւ են ճանաչում և երեւի կը յայտնեն, թէ ո՞վ է, ի՞նչ է այդ Տէր Գրիգորեան անունով էակը) եկել էր Քիֆլիս մի ինչ որ Տէր Գրիգորեան, որին «Մշակի» խմբագրատան մէջ ձեկպէգիտորի» — լրագրի համարներ առաքողը — պաշտօն պիտի արուէր համաձայն Արծրունու հրամանի և որին նոյն իսկ «Մշակի» խմբագիրը բոլորովին անընդունակ էր համարում սրբագրողի պաշտօնն անգամ կատարելու մէջ: Այդտեղ և այդ ժամանակ միայն ասեւել եմ այդ ինչ որ Տէր Գրիգորեան կոչուածին:

Ես չգիտեմ և բոլորովին զարմացած եմ, թէ ի՞նչ գործ, ի՞նչ յարաբերութիւն, ինչ լինելու պատճառ (raison d'être) պիտի ունենայ իմ կենսագրութիւնը (sic) պ. Ամերիկեանի ճանաչմանի պատասխանի մէջ:

Պ. Արծրունի՝ դուք որ այնքան խօսում էք լոգիկայի վրայ, դուք որ այնքան աղաղակում էք հետեւաբար վարվելու մասին, դուք որ փիլիսոփայութեան վարդապետ էք՝

ասացէք խնդրեմ, ի՞նչ յարաբերութիւն կայ իմ կենսագրութեան (?!!) և պ. Ամերիկեանի ներկայացման մէջ, ի՞նչ է ապացուցվում իմ մասին ասված այդ խօսքերով: Չէ որ դրանով դուք՝ ապացոյց առաջ բերելով «Մշակի» բոլոր աշխատակիցների տղիտութեան ու անկիրթութեան մասին, հաստատում էք «ՕՅՅՕՐԵ» լրագրի խօսքերի ճշմարտութիւնը, թէ ձեր լրագրի աշխատակիցները համբակ — տղաներ, ստորին դասատների շնորհիւնեք: — Բայց շարունակեք:

Արդեօք ես հին կամ նոր դերասան եմ, արդեօք ես իմ աննկական հասակից ծանօթ եմ եղեք թատրոնի կուլիսներին, արդեօք ես հաշիւ ու համար ունեմ տալու իմ զեղեցիկ, մարուր դերասանական և շատ ուրիշ չունեցած ու չը գործած ասկանս վարմունքների մասին, արդեօք ուղղակի կամ անուղղակի մասնակցել եմ պ. Ամերիկեանի այս նոր ներկայացմանը, հը, թէ ի՞նչ է, ասացէք խնդրեմ: Կամ կարելի է ուղում էք ձեր այժմեան «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել «Մշակի» նախկին աշխատակից պ. Յարոյի կենսագրութեան հետ պ. Ամերիկեանի ճանաչմանի պատասխանի մէջ: — Երեւի այդպէս է: Եւստի հակալ եմ ձեզանից: Եստ երախտիք յիշող մարդ էք դուք: — Բայց պէտք է ասեմ, որ ոչ դուք և ոչ ձեր աղաները կամ ծառաները (ներեցէ՛ք որ շատ անգամ շփոթում եմ և խառնուս թէ ո՞վ է ձեր մէջ ում ծառայ կամ աղայ և ո՞վ ում ձեռքին խողալիք է դառել) ընդունակ են նկարագրելու (սորա պատճառները աշխարայ են) իմ համեստ ու ամբիժ կեանքը, որ յայտնի է միայն ինձ լաւ ճանաչող մարդկանց: Ես համոզուած եմ, որ ոչ թէ իմ կենսագրութիւնը հարկաւոր է այժմեան «Մշակի» ընթերցողներին, այլ ձեր և ձեր ծառայ աշխատակից արբանեակների դաստիարակող վարքագրութիւնը հետաքրքիր կը լինի նրանց համար:»

Ես չգիտեմ և նոր եմ իմանում, որ ես իմ բոլոր ընթերցողների ազնիւ ուշադրութիւնը գրաւելու համար իմ փոքրիկ գրքով՝ պարտաւոր եմ մի ինչ որ, մի ինչ որ թշուառ Տէր Գրիգորեանին, որ 1874-ին իմ «Փարիզի նամակները»

իրք թէ առողջում և ահագին կտորներ դուրս գցում է եղել նրանցից: Այդ բանը կարելի է ապացուցանել (ինչպէս չէ) և իմ նամակների պատճեններով, որոնց սովորութեանս համեմատ միշտ ինձ մօտ եմ պահել և այժմ էլ պահումն շատ քրքիր է իմանալ, թէ իսկ հետեւեալ տարիներին՝ ինչպէս 1875-ին, 1876-ին և 1877-ին ո՞վ էր առողջում և դուրս գցում կտորներս իմ նամակներից ու յօգուածներէից: Ո՞վ տղայական երազային միտքարութիւն: Բայց դիցուք թէ իրաւ իմ նամակներից պուրս էին գցում կտորներս, ասացէք խնդրեմ, ինչ է ապացուցվում դրանով, եթէ ոչ այն, որ չը նայելով համակ—տղաների աղաւաղելուն, այնուամենայնիւ իմ գրուածները դարձեալ կարողանում էին գրաւել շատ ընթերցողների ազնիւ ուշադրութիւնը:

Պ. Արծրունի ձեր գիտնական և համբակ—տղաների իմաստակ կարծիքով կարելի է վար գցել իմ վարկը հասարակութեան աչքում՝ ասելով որ ես ևս իմ մանկութեան ժամանակ զանազան դպրոցների—օրինակ մինչև անգամ Կարապետ վարժապետ Բելախեանցի և դիցուք Ներսիսեան դպրոցի—աշակերտ եմ եղել, յետոյ այդ տեղերից դուրս եմ եկել մտել եմ ուրիշ տեղ, ման եմ եկել Քիֆլիսում, ոչինչ չեմ շինել, ծոյլ, անընդունակ եմ եղել, վերջապէս գնացել եմ Փարիզ, ոչինչ չեմ սովորել, դատարկ աննպատակ ման եմ եկել, վերադարձել եմ վերջը, և այլն, և այլն:

Բոլորովին աւելորդ համարելով հանգստացնել իմ ընթերցողներին դպրոցական առաջադիմութեանս մասին, որ նրանց չէ զբաղեցրել և չէ զբաղեցնում, կասեմ (թող ներուի ինձ ասել, որովհետև պահանջվում է) որ՝ միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների ու զանազան պրօֆէսօրների վկայականներ ունենալով՝ ոչ քաղաքատնտեսագիտութեան դօքտօր եմ, (թէև կարող էի մի այդպիսի տիտղոս կրել Գրիգոր Արծրունու պէս և ոչ երբէք մի տնտեսագիտական յօդուած դուրս տալ իմ մասնագիտական գլխից), ոչ գերմանական գիտլօմ ունեմ, ոչ գաւաճանել եմ համալսարանում տուած երդմանը—միշտ հաւատարիմ մնալ գիտութեանը—ոչ խռվել

ու ներս եմ պռծել ամեն բանի մէջ, որով կարողանամ ցոյց տալ իմ կուպիտ ագիտութիւնը (ignorance crasse) ու անհեռատես մտքի կուրութիւնը: Եւ ոչ էլ հոչակուելու համար հակաժողովրդական գրուածներով ու մտքերով համոզմունքներն ու պրիցիպները ոտի տակ եմ գցել և աշխատել եմ ու շարունակում եմ աշխատել շատերին դուրեկան, հաճոյ լինելու և այլն: Իսկ ինչ որ վերաբերում է իմ մասնաւոր կեանքին, — չեմ ասում իմ գրականական աննշան գործունէութեանը, որովհետև անկեղծ ու անկողմնապահ ընթերցողներին արդէն յայտնի է, — կարող եմ վկայ բերել թէ Փարիզի և թէ Քիֆլիսի մէջ գտնուած շատ պատուաւոր ընտանեկներին, յարգելի պարոններին, որոնք՝ լա ճանաչելով իմ անկեղծ ու չափից դուրս պարզ բնաւորութիւնն ու կեանքը, կարող են գաղափար ունենալ և օրինաւոր կերպով դատել իմ վարքի, բարքի և ուրիշ ընդունակութիւնների մասին:

Բայց դիցուք թէ ես բոլորովին անպիտան, անկարգ մարդ եմ, տգէտ եմ, ոչինչ չը գիտեմ, առաջին դաստասնից եմ դուրս եկել, (ուրեմն այդ ինչ որ Տէր Գրիգորեանի հարեւան եմ, հիւանալի, նախանձելի հարեւանութիւն), դիցուք թէ անգործ ման եմ եկել Քիֆլիսի մէջ, յետոյ գնացել եմ Փարիզ, ոչ մի բան չեմ սովորել, բուրվալները, սրճանոցները չափել եմ, վերջապէս ամեն տեսակ անընդունակութիւն ցոյց եմ տուել, վերադարձել եմ և պատիւ եմ ունեցել ձեզ հետ միասին, պ. Արծրունի, Քիֆլիսի բուրվալների վրայ թե թեի տուած անցնել, մանգալ: Ասացէք խնդրեմ, ի՞նչ է ապացուցվում դրանով: Արդե՞ք ապացուցվում է, որ դուք պատուական մարդ էք, որ դուք ազնիւ էք, արդե՞ք ապացուցվում է, որ դուք ձեր ապերախտութեամբ շնորհակալ էք ձեզ օգնող նախկին «տաղանդաւոր», «Փարիզի մշտական աշխատակից» պ. Յարոյի գործունէութեանը, այն Յարոյի, որ դժբաղդութիւն է ունեցել աշխատակցելու «Մշակին» իր նամակներով, որոնց դուք «միշտ ուրախութեամբ տպում» էիք*): Ապացուցվում է արդե՞ք,

*) Չակերտներում ամուսնու խօսքերը պ. Արծրունու սեպտեմբեր թուի էր:

որ ձեր գործունեութիւնը արդէն իր անկեալ մակերևոյթից կարող է բարձրանալ: Այ, ոչ և դարձեալ ոչ:

Բայց զիցուք թէ ձեր լրագրի բոլոր աշխատակիցները բարքով, վարքով, զարգացմամբ, կրթութեամբ հաւասար են եղել միեւնոյն հետ, ամենքն էլ բաղտախնդիր «չխօշնիկներ», համբախտաբաններ են եղել: Ասացէք ինչպէս թէ՛ նչ եղբակալութիւն կարելի է դուրս բերել դրանից, թէ՛ նչ է ապացուցվում դրանով: Այ որ այն, որ ձեր լրագրի բոլոր աշխատակիցները ամենքն էլ, տգէտ, անընդունակ, առաջին կամ երկրորդ և ուրիշ գաստաներից դուրս եկած, արտաքսուած աշակերտներ, համբախտաբան տղաներ են՝ ձեր ծառայ... Տէր Գրիգորեանի պէս: Արեւմտեան, լոգիկայի վարդապետ պ. Արծրունի, թէ՛ նչ ապացուցվեցաւ, որ է լոգիկան: Ինչ որ չէիք ուզում՝ հէնց այն էլ ապացուցվեցաւ: Արեւմտեան, կարող է հարցնել ընթերցողը, թէ՛ նչ է իսկական պատճառը, որ դուք պ. Արծրունի, հիմայ էք մտաբերում Յարոյին և անպատվում ձեր յարձակմունքներով:

Ահա թող ասեմ ընթերցողին, թէ ինչ է պատճառը: Առաջին իմ բրոշուրը (Հայոց մամուլը), որի թարգմանութիւնը տպուած էր «ՕՐՅՈՐԹ» լրագրում անցեալ յուլիս ամսին, շուտով լոյս կը տեսնէ: Երևի գաւառացի և ուրիշ հայերը փոքր ի շատե կը հետաքրքրվեն, կը կարդան: Ահաք է ուրեմն նորա հեղինակի վարկը վայր գցել առաջուց ընթերցողների աչքում, պէտք է խայտառակել նորան, որ բրոշուրը իր ազդեցութիւնը կորցնէ: Երկրորդ, պ. Արծրունի, դուք՝ վաղուց արդէն մի կողմը դնելով գերմանական համարաբանում տուած երդումը—միշտ հաւատարիմ մնալ զիտութեանը—բզմնագանց էք գտնուել մտնելով դեռ ևս մանուկ և ոտքի վրայ նոր կանգնող մեր հայ գրականութեան մէջ շտապատանութիւն, որի դէմ հէնց նոյն իսկ «Մշակում» բողոքում էի ես (տես «Մշակ» 1877 № 53 «Նամակներ իմ բարեկամին»): Երրորդ, օգուտ քաղելով, պ. Արծրունի, այն նիւթական միջոցներից, որոնք ձեր հօր ողորմութեամբ

են, որոնց «Մշակ» որ համարների մէջ կրօնիլը մատնացոյց կարող ես անել:

ձեր ձեռքն են ընկել, կարողանում էք առնուդ ու ծախուդ, ստրուկ, Թշուառ արարածներին գրաւել և, թերազրելով նրանց ձեր կրքերը, անպատուել էք տալիս ամեն տեսակ անձնաւորութիւն ձեր սե, նախանձոտ, ետական զգացմունքներին միայն բաւականութիւն տալու համար: Զորրորդ, որ դուք անընդունակ լինելով ազատ մրցութեան մէջ, աշխատում էք մի կերպով սպանել, օտնակոխ անել ամեն մի ընդունակութիւն, ամեն մի գործ, ամեն մի ոյժ, որ կարող էր մթնացնել և երևան հանել ձեր ոչնչութիւնը:—Նպատակը արդարացնում է միջոցները: Այդ ձեր վաղուց յայտնած պրինցիպն է: Իսկ ձեր նպատակը՝ շատ տխուր նպատակ է: Հինգերորդ, որ տարին վերջանում է և դուք կամենալով որսալ միամիտ գաւառացի հայերին, (ասում եմ գաւառացի, որովհետեւ ամբողջ Թիֆլիսը ձունաչում է ձեզ), իբր թէ այժմ կազմած ունէք մի այնպիսի խմբագրութիւն, որի անդամները (!) «Մշակի» նախկին աշխատակիցներից էլ ամեն բանով բարձր մարդիկ են: Այն ինչ գաւառներից արտաքսած, արհամարհած էականներ լինելով՝ կազմում են «Մշակի» այժմեան խմբագրութեան, ձեր լեզուով խօսենք, կոստիւնդէնտը և այլն:

Ասում են, որ անձնական հաշիւները գրականութեան մէջ տեղ չունեն: *) Այո, այդ ճշմարիտ է: Ինչքան շատ անգամ մեղանչել էք այդ բանի դէմ և այժմ էլ զարձեալ գրունակեցէք մեղանչել (թէ՛ նչ կայ, հայ հասարակութիւնը, որին դուք բարոյապէս հարստահարում էք և կը հարստահարէք, խմբագրութեան համեմատ մինչև ձեր կատարեալ անկումը ներողամտ կը լինի) և հրապարակաւ յայտնել, թէ ինչու ոչ մի համալրարանական հայ երիտասարդ, թէ՛ նչու ոչ մի օրինաւոր, զարգացած մարդ չէ ընկերանում ձեզ հետ. թէ՛ նչու Գերմանիայում ձեր բարեկամ եղած ոչ մի հայ երիտասարդի հետ (բոլորի անունները կարող եմ յիշել) ամենեին բարեկամութիւն, մտերմութիւն, ընկերութիւն չունէք դուք. թէ՛ նչու «Մշակի» նախկին բոլոր

*) Եթէ Գր. Արծրունին պարկեցիտ է, պիտի է գիտենայ, որ անմասկոտ, պատուի հաշիւները կարող եմ չեն վճարում...

աշխատակիցները հեռացան ձեզանից, վերջապէս ի՞նչ էր իմ հեռանալու պատճառը, որ չէք կարողանում մարտեր: Եարունակեցէք, շարունակեցէք դարձեալ այնպէս և յայտնեցէք հրապարակաւ, որ ամենքը անագնիւ, շահասէր, ազէտ, ծոյլ, կեղծաւոր, նախանձոտ, հարստահարող, անխիղճ, անբարոյական մարդիկ են և դուք էք միայն ձեր ողորմելի համբակ—աղաների, ձեր ծառայ աշխատակիցների հետ, որ բանական կղզի էք գոյացնում:

Պ. Արծրունի, դուք կարող էք ամեն տեսակ կեղտոտ բամբասանք, ամեն տեսակ անամօթ զրգարաութիւն, վերջապէս «ինսինուացիայ» հնարել կամ հնարել տալ ձեր ծառաներին ամեն օրինաւոր մարդու դէմ, եսական կրքերիդ բաւականութիւն տալու համար, դուք կարող էք ազդասիրական դիմակով շատերին հարստահարել թէ նիւթապէս, թէ բարոյապէս, դուք կարող էք ոչ թէ միայն «պրէմիաներին» հասնել ձեր ջերը լցնելու և խակ, անպատրաստ, չը հասկացող հայ հասարակութիւնը անբարոյակացնելու, այլ և իր ժամանակին կանխելու էլ չէք հրաժարուի, չէք փակել:

Մարդիկ կան, որոնք իրանց ամբողջ կեանքը սխալանքի մէջ են անցկացնում: Ես ներում եմ իմ երիտասարդ երեւակայութեանը, որ Փարիզում նստած և ձեզ դեռ չը ճանաչած կարդալով և յափշտակվելով ձեր անգիր արած, մի աստ, աննշան, դատարկ, փքուած խօսքերով (ազատութիւն, առաջադիմութիւն, գիտութիւն, ընտանիքի բարոյականութիւն, կնօջ ազատութիւն, խղճմանք, հաւասարութիւն, ժողովրդի իրաւունք և այլն) հաւատացել և զուտ ոսկու տեղ է ընդունել: Ես ներում եմ իմ սխալանքին, ներում եմ իմ երիտասարդ երեւակայութեանը և դուք էլ պ. Արծրունի, ներեցէք, ներեցէք ինզրեմ, սխալվել եմ, գլուխ քարով եմ տուել, երես էլ պատուի: Ես հաւատացած եմ, որ ամին մի ճշմարիտ, սուրբ զգացմունքներ ունեցող հայ, ամեն մի օրինաւոր մարդ, հէնց որ ձեզ մօտեցաւ և ճանաչեց՝ մի և նոյնը կը զգայ, մի և նոյն կասէ — և... կը հեռանայ ձեզանից:

Այն հայ մարդկանց, որոնք Արծրունու «պրէմիաներին» ստորացնում իրանց առանց կարմրելու, այն հայերին, որոնք, անխռով ու անբողբ ընդունում են իրանց վրայ մեր ազգութեանը վերաբերեալ ամենակեղտոտ հայոհայանքները *), այն հայերին, որոնք սեպհական դատողութենից զուրկ՝ չը գիտեն, թէ ո՞ւր է տանում նրանց Արծրունին...— Ես ոչինչ չունեմ ասելու: Ես զիմում եմ այն հայ մարդկանց, որոնք ճշմարիտ հայ սիրա ունին, հասարական օգուտը ճանաչում են, գիտեն գրանութեան նշանակութիւնը մի ազգի առաջադիմութեան համար, այն էլ մեզ նման ամեն բանում յետ մնացած ազգի համար, հասկանում են, թէ ինչ տխուր հետևանքներին կարող է հասցնել հասարակութեանը գրականական շառլատանութիւնը...— այո, ես այդպիսներին եմ զիմում և հրաւիրում եմ դրանց առաջն սանել հասարակական շարիքներին, քանի որ ուշ չէ...

1878. Նոյեմբերի 22. Քիֆլիս:

Յ Ա Ր Ո Յ

Պ. Արծրունին իր առաջնորդող (1) յօդածներից մէկուս հայոց ազգից էլ վատ սուր, կեղտոտ ազգ չէ նանաչում աշխարհիս երեսին..

Дозволено цензурою. Тифлисъ. 24-го Ноября 1878 года.

ТИПОГРАФИЯ ИВАНА МАРТИРОСИАНЦА.

գրք 54

« Ազգային գրադարան »

NL0109893

